ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

1 դեկտեմբերի 2022թ. թիվ 1332

Ռ. ՊՈՂՈՍՅԱՆԻՆ ԵՎ Հ. ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ՖՐԱՆՍԻԱՅԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ (ՄԱՐՍԵԼ) ՄԵԿՆԵԼՈՒ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 1239-Ն որոշմամբ սահմանված կարգի 4-րդ, 12-րդ և 22-րդ կետերով, հիմք ընդունելով Լոռու մարզպետարանի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետի զեկուցագիրը՝

Հ ր ա մ ա յ ո ւ մ եմ.

1. Լոռու մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Ռուզաննա Պողոսյանին և զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վելուծության բաժնի պետ Հասմիկ Մկրտչյանին ս/թ դեկտեմբերի 5-ից 7-ը թույլատրել մասնակցելու Ֆրանսիայի Հանրապետության Մարսել քաղաքում տեղի ունեցող «Միջերկրականի ապագան – գործողություն 5» միջոցառմանը:

2. Ռ.Պողոսյանի և Հ.Մկրտչյանի՝ Ֆրանսիայի Հանրապետություն (Մարսել) մեկնման ծախսերը կատարվելու են հրավիրող կողմի միջոցների հաշվին:

3. Ռ.Պողոսյանին և Հ.Մկրտչյանին՝ վերադառնալուց և աշխատանքի ներկայանալուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն ներկայացնել Լոռու մարզպետարանի գլխավոր քարտուղարին:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

01/12/2022

X

ԿԱՄՈ ԱՇՐԱՖՅԱՆ

Կ.ԱՇՐԱՖՅԱՆ

2022թ. դեկտեմբերի 1
ք.Վանաձոր